



№ 16.1/16/593-18  
« 14 » 09 2018թ.

«Հետք», թերթի լրագրող  
Քրիստինե Աղալարյանին

Հարգելի տիկին Աղալարյան,

Մույն թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին (այսուհետ՝ Տեսչական մարմին) հասցեագրված Ձեր հարցմանն ի պատասխան տրամադրում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Տեսչական մարմնի կողմից «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունում իրականացված ստուգման արդյունքները և ներգրավված մասնագետների կողմից տրված եզրակացությունները տրամադրելու վերաբերյալ հայտնում եմ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն, տեղեկատվության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը, ներկայացնում է բնության և շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում տիրող իրական վիճակը:

Հաշվի առնելով նաև, որ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը արդեն իսկ քաղաքացիներին տրամադրել է տեսչական ստուգման արդյունքում կազմված ստուգման ակտը, որով փաստել է, որ այն իր համար գաղտնի տեղեկատվություն չի պարունակում՝ Ձեզ եմ ներկայացնում ստուգման ակտում և ստուգման արդյունքում կազմված երեք մասնագիտական եզրակացություններում առկա տեղեկատվությունը:

Տեղեկացնում եմ, որ ստուգումն իրականացվել է 2018 թվականի հուլիսի 6-ից օգոստոսի 2-ը ներառյալ: Տեսչական մարմնի տեսուչներից բացի, տեսչական մարմնի ղեկավարի համ. ՎՓ01-Ա և ՎՓ02-Ա որոշումներով, որոշակի նեղ մասնագիտական հարցերի պարզաբանման նպատակով, ստուգման գործընթացին ներգրավվել են նաև այլ մասնագետներ՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, ինժեներ-երկրաբան Դմիտրի Առաքելյանը, «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակից, երկրաքիմիկոս Գեղամ Մուրադյանը, կենսաբազմազանության հարցերով մասնագետներ Վասիլ Անանյանը, Անուշ Ներսեսյանը և Ալեքսանդր Մալխասյանը: Կից ներկայացնում եմ ԱԿՏ 30 ստուգման ակտի էլեկտրոնային տարբերակը, ինչպես նաև ամբողջական տեղեկատվություն ներգրավված մասնագետների կողմից տրված եզրակացությունների վերաբերյալ:



*Բնության համաշխարհային հիմնադրամի մասնագետներ Անուշ Ներսեսյանի, Վասիլ Անանյանի և Ալեքսանդր Մալխասյանի ներկայացրած մասնագիտական հաշվետվությունը Անուշար կատարած այցելության վերաբերյալ.*

Նկար 1. Իրականացված այցելության ուղին (նշված է կարմիր գույնով)



### **Կենդանական աշխարհ**

Այցելության ընթացքում գրանցվել են հետևյալ թռչունները (ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակները ընդգծված են)

1. Մոխրագույն կաքավ - Grey Partridge (*Perdix perdix*) – 2 մեծահասակ և շուրջ 20 երիտասարդ թռչուն Տիգրանես գագաթի մոտ
2. Սև անզղ - Cinereous Vulture (*Aegypius monachus*) – կեր հայթայթող հասուն թռչուն Արշակես գագաթի մոտ
3. Օձակեր արծիվ - Short-toed Eagle (*Circaetus gallicus*) - կեր հայթայթող թռչուն կույտային տարավազման հարթակի մոտ

4. Մեծ ճուռակ - Common Buzzard (*Buteo buteo*) – կեր հայթայթող մեծահասակ թռչունների զույգ փոխակրիչի հատվածի երկայնքով
5. Թխակապույտ աղավնի - Rock Dove (*Columba livia*) - շուրջ 10 թռչունից բաղկացած երամ բեռնատարների բեռնման հարթակի մոտ
6. Ոսկեգույն մեղվակեր - European Bee-eater (*Merops apiaster*) – լավեցին մի քանի խմբեր Արշակես տանող ճանապարհին
7. Դաշտային արտույտ - Skylark (*Alauda arvensis*) – շուրջ 15 թռչուն էրատո և Արշակես գագաթների միջև
8. Եղջրավոր արտույտ - Horned Lark (*Eremophila alpestris*) – 10 թռչունից բաղկացած երամ Տիգրանես գագաթի մոտ
9. Ժայռային ծիծեռնակ - Crag Martin (*Ptyonoprogne rupestris*) շուրջ 30 երիտասարդ և մեծահասակ թռչունից բաղկացած երամ ժայռաքարերի վրա՝ Էրատո և Արշակես գագաթների շրջակայքում
10. Քաղաքային ծիծեռնակ - House Martin (*Delichon urbicum*) – շուրջ 150 թռչուն ժայռաքարերի վրա՝ Էրատո և Արշակես գագաթների շրջակայքում
11. Լեռնային ձիաթռչնակ - Water Pipit (*Anthus spinoletta*) – շուրջ 25 առանձնյակ սուբալպյան գոտու ճանապարհին
12. Սպիտակավող սոխակ - White-throated Robin (*Irania gutturalis*) – 2 առանձնյակներ լեռնատափաստանային գոտու թփերի մեջ՝ ջարդիչ կայանների հատվածի մոտ
13. Սևուկ կարմրատուտ - Black Redstart (*Phoenicurus ochruros*) – մեկ առանձնյակ Արտավազդես գագաթի վրա
14. Մարգագետնային չքքան - Winchat (*Saxicola rubetra*) – մեկ առանձնյակ Արտավազդես գագաթի վրա
15. Խայտաբղետ քարակեռնեխ - Rufous-tailed Rock-thrush (*Monticola saxatilis*) – էգեր և դեռահաս առանձնյակներ Էրատո գագաթի մոտ
16. Սովորական քարաթռչնակ - Northern Wheatear (*Oenanthe oenanthe*) – շուրջ 15 առանձնյակ մերձալպյան գոտի տանող ճանապարհին
17. Սևավիզ քարաթռչնակ - Finsch's Wheatear (*Oenanthe finschii*) – շուրջ 8 առանձնյակ ԱԴՎ կայանի և ջարդիչ կայանների հարթակի միջև
18. Մոխրագույն շահրիկ - Common Whitethroat (*Sylvia communis*) – մեկ առանձնյակ Արտավազդեսի գագաթին
19. Ժայռային մեծ սիտեղ - Eastern Rock Nuthatch (*Sitta tephronota*) – մեծահասակների և երիտասարդների խումբ ժայռաքարերի վրա ԱԴՎ կայանի մոտ
20. Սևաճակատ շամփրուկ - Lesser Grey Shrike (*Lanius minor*) – մի քանի առանձնյակ ԱԴՎ կայանի և կույտային տարավացման հարթակի մոտ
21. Ժուլան - Red-backed Shrike (*Lanius collurio*) – մի քանի առանձնյակ ԱԴՎ կայանի և կույտային տարավացման հարթակի

22. Ժայռային ճնճղուկ - Rock Sparrow (*Petronia petronia*) – շուրջ 7 առանձնյակ Էրատո գագաթի մոտ
23. Կանեփնուկ - Linnet (*Carduelis cannabina*) – խումբ փոխակրիչի հատվածի մոտ
24. Լեռնային վշասարեկ - Twite (*Carduelis flavirostris*) – 5-10 առանձնյակներից բաղկացած խումբ Էրատո և Արշակես գագաթների միջև:

**Կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչներ.**

Տիգրանես և Արշակ գագաթների միջև ընկած տարածքում (N39.725344°, E45.718395° կոորդինատներով) գրանցվել է ապոլոնը (*Parnassius apollo kashtshenkoi* Sheljuzhko, 1908) (Նկ 2). Սա տեսակի առաջին գրանցումն է հյուսիսային Սյունիքի մարզում և Ամուլսարի տարածքում: Այս տեսակը նշված չէ նաև ՇՄԱԳ 2016 հաշվետվությունից: Այն գրանցված է ՀՀ Կենդանիների Կարմիր Գրքում, որպես խոցելի տեսակ և նաև ընդգրկված է Բեռնի Կոնվենցիայի հավելված երկուսի մեջ:

Նկար 2. *Parnassius apollo kashtshenkoi* Sheljuzhko, 1908,



**Բուսական աշխարհ**

Հետազոտված կետեր (կանգառներ)

1. Կառուցվող հոսքագծի ստորին հատվածի շրջակայք: Տրագականտի տափաստան, մարգագետնատափաստան: 2000 մ ծ.մ.բ

Ճանապարհի և հոսքագծի անցկացման արդյունքում խախտվել է լանդշաֆտը: Լանդշաֆտի մի մասը ճանապարհի և փոխակրիչի երկայնքով փակված է հողաշեղջերով: Հողաշեղջերի վրա դիտարկվում են մոլախոտային բուսականություն և պիոներ բույսեր: Ողեկցող անձիք տեղեկացրին, որ մոլախոտային և պիոներ բույսերի չափազանց մեծ տարածումը կանխելու նպատակով կատարվում են նրանց ծաղիկների կտրման աշխատանքներ:

Ճանապարհի երկանքով տեղաբաշխված են թմբեր, որոնք կազմված են գրունտի վերին բերրի շերտից, որը հանվել է բույսերի ճիմահողի հետ միասին: Մեզ բացատրվեց, որ դա արվել է բույսերի պահպանությունը ապահովելու համար: Սակայն մեկը մյուսի վրա դրված շերտերը լավագույն դեպքում հնարավորություն կստեղծեն վերին շերտի բույսերի պահպանման համար: Սա տեղի կունենա միայն բավարար խոնավացման և սուբստրատի կառուցվածքի պահպանման պարագայում, ինչը քամիների և ջերմասիճանի տատանումների դեպքում շատ կասկածելի է: Թմբերի մակերեսները զգալիորեն փոքր են այն տարածքից, որից վերցվել է բուսական ծածկոցը:

Տարածքում կարճատև կանգառի ընթացքում հավաքվեց մի շարք բուսատեսակներ (N 39.75215°; E 45.64123°; 2000մ ծ.մ.բ.) և հայտնաբերվեց մեկ բուսատեսակ՝ ամենայն հավանականությամբ Ոզնաթուփ մեխակի (*Acantholimon caryophyllaceum* Boiss.), որը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում որպես խոցելի տեսակ (VU).



2. Քարապարտեզ Մատնունի ծիրանավոր (*Potentilla porphyrantha*) տեսակի համար, որը գտնվում է Էրատո գագաթից ներքև: Ալպիական մարգագետին և քարասեր բուսականություն: 2886 մ ծ.մ.բ:

Տվյալ տեղամասը զուրկ է Մատնունի ծիրանավոր բնական պոպուլյացիաներից: Քարապարտեզը իրենից ներկայացնում է ex situ տնկադաշտ՝ բույսերի լավ կպչողականությամբ:

Ողեկցող անձանց պնդմամբ քարապարտեզը ստեղծված է Մատնունի ծիրանավոր պոպուլյացիայի ներկայացուցիչների մի մասի տեղափոխման և տնկման համար, որը ոչնչացվել էր Տիգրանես -Արտավազդես գագաթների վրա իրականացված շահագործման ժամանակ: Այդ պոպուլյացիայի մի շարք առանձնյակներ տնկվել են նաև ex situ Երևանի բուսաբանական այգու Սևանի բաժանմունքում: Բույսերը պլանավորվում է վերադարձնել վերակուլտիվացված տեղամասեր ընկերության կողմից աշխատանքների ավարտից հետո (մոտավորապես 25 տարի անց): Մակայն խիստ կասկածելի է քարասերների վերադարձը մի տեղամաս, որտեղ համարյա ոչնչացվել են ժայռերը, որոնք պիտանի են տվյալ տեսակի բնակվելու համար:

3. Ճանապարհի դեպի <<Անձեռնամխելի տարածք>>: Ալպիական բուսականություն: 2963 մ ծ.մ.բ.:

Մեքենայի անսարքությամբ պայմանավորված կանգառ Հայտնաբերվել է ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված թիթեռ ապոլոնը:

Այս պահին լանդշաֆտը խախտված է միայն անցկացված ճանապարհով:

4. <<Անձեռնամխելի տարածք>> Լիդիան Արմենիա ընկերության կողմից պահպանվող տեղամաս, որը գտնվում է շահագործվող տարածքից դուրս: Ալպիական և քարասեր բուսականություն: 2937մ ծ.մ.բ.:

Տարածքը ներառում է Մատնունի ծիրանավոր տեսակի բնական ապրելավայրերը:

Չնայած անձեռնամխելիությանը կա Տիգրանես-Արտավազդես գագաթների վրա իրականացվող շահագործման հետևանքով լանդշաֆտի փոշիով աղտոտման հավանականություն: Այս կետում գտնվելու ժամանակ ակնադիտորեն արձանագրվեց հրդեհի սկիզբ Սարավան գյուղի մերձակայքում: Կատարվեց զանգ ԱԲՆ:

5. Վերադարձի ճանապարհին գտնվող Տիգրանես -Արտավազդես շահագործվող տարածքների մերձակայքը: Խախտված լանդշաֆտ (ալպիական և քարասեր բուսականության տարածքներում): 2973մ ծ.մ.բ

Այցելությունը ընդհատվեց հրդեհի հանկարծակի և սրընթաց ընդարձակման պատճառով, որը հասել էր Լիդիան Արմենիա ընկերության տարածքի ստորին տեղամասերին: Ընկերությունը

ներկայացնող ուղեկցող անձիք խնդրեցին ընդհատել այցը, որպեսզի կարողանան մասնակցել հրդեհաշիջման աշխատանքներին: Խումբը վերադարձավ Լիդիան Արմենիա ընկերության տարածքի մուտքի մոտ:

Ակնադիտորեն (մեքենայից) մենք դիտարկում էինք զգալի տարածքներ, որոնք նախատեսված են կույտային տարրավազման հարթակներ և լցակույտի համար: Մա նախկին բնական լանդշաֆտներ են, ինչպես նաև տեղի բնակիչներից գնված նախկին ծիրանի այգիներ: Այդ բոլոր ընդարձակ տարածքները այս պահին ամբողջությամբ զուրկ են հողային և բուսական ծածկույթից:

### **Եզրակացություն**

Ընդհանուր առմամբ այցի շրջանակներում գրանցվել է ՀՀ Կարմիր գրքում ներառված 5 տեսակի կենդանիներ, որոնցից մեկը՝ ապոլոնը (*Parnassius apollo*) հայտնաբերվել է առաջին անգամ Ամուլսարի տարածքում և 2 տեսակ բաձրակարգ բույսեր, որոնցից մեկը՝ ամենայն հավանականությամբ Ոգնաթուփ մեխակի (*Acantholimon caryophyllaceum* Boiss.) հայտնաբերվել է առաջին անգամ Ամուլսարի տարածքում:

Այն տարածքներում, որոնք գրկվել են հողային և բուսական ծածկույթից, լրիվ խախտված է կենսացենոզը, որը կարող է շխտայաբար բացասական ազդեցություն ունենա Ամուլսարի բույսերի և կենդանիների տեսակների բազմազանության, նրանց քանակի և կենսունակության վրա:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված երկու տեսակների հայտնաբերումը ընդամենը 3,5 ժամյա այցելության ընթացքում վկայում է, որ Ամուլսարի տարածքի կենսաբազմազանության գնահատումը պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություններ:

*ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող  
երկրաբանական գիտությունների թեկնածու Դմիտրի Առաքելյանի եզրակացությունը  
Ամուլսարի ոսկեբեր կվարցիտների հանքավայրի ՇՄԱԳ-ի վերաբերյալ:*

**Պլանավորվող դատարկ ապարների լցակույտի տարածքի վերաբերյալ**

- «Գեոթիմ»-ի կողմից ներկայացված ինժեներատեքնոլոգիական հորատանցքերի և խուզահորերի տեղադիրքերի և քանակների տվյալները բավարար հիմնավորում չեն կարող հանդիսանալ դատարկ ապարների լցակույտի պահեստավորման համար: Մասնավորապես 5 հատ փորված հորատանցքերը (GRE-B8, GRE-B6, GRE-B10, GRE-W1, GRE-B6A) տվյալ տարածքի (մոտ. 2-2.5կմ<sup>2</sup> տարածքում) վերաբերյալ չեն կարող տալ ամբողջական պատկեր ինժեներատեքնոլոգիական պայմանների մասին ըստ ինժեներատեքնոլոգիական 1:500մ, 1:1000մ, 1:2000մ կոնդիցիաների (նկ.1):
- Բացակայում են ինժեներատեքնոլոգիական երկայնական և լայնական կտրվածքներ ըստ հորատանցքերից ստացված գրունտների ֆիզիկոմեխանիկական հատկությունների տվյալների, որոնք անհրաժեշտ է ներկայացնեն ինժեներատեքնոլոգիական էլեմենտները, գրունտային ջրերի մակարդակը և այլ պարամետրեր ըստ պահանջվող նորմատիվների: Փորված հորատանցքերը (TP-774, TP-775, DDAG-392, BH-606, DDAG-387 և այլն) և կատարված աշխատանքները հիմնականում ընդգրկում են և հիմնավորում են քարաջարդման, ավտոպարկի և այլ հանքաշահագործման ինֆրակառույցների տարածքների կառուցումը և շահագործումը:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ պլանավորվող դատարկ ապարների լցակույտի տարածքի ինժեներատեքնոլոգիական ուսումնասիրությունները իրականացված են ոչ լիարժեք և չեն ապահովում անհրաժեշտ տեղեկատվություն ներկայիս իրավիճակի գնահատման համար:

Ընկերության ներկայացրած հաշվետվություններում շատ մակերեսորեն ներկայացված են նախկին տարիների կատարված աշխատանքները: Այդ հաշվետվություններից մեկում ուսումնասիրման պատմությունը սկսվում է Կոտլյառի կողմից և անմիջապես անցում է կատարվում 1955թ.-ի հաշվետվություն: 2008-2016թթ. ներկայացված են միայն Գոլդերի փորձագետների աշխատանքները և ընկերության հաշվետվությունները, սակայն 1952-1954թթ. պլանավորվող դատարկ ապարների լցակույտի տարածքի վրա «Ամուլսարի որոնողահետախուզական խմբի, 1955թ.» կողմից կատարվել են ուրան-թորիումի երևակման գնահատման աշխատանքներ վերջնական հաշվետվությամբ՝ 1955թ.-ին (նկ.2):

Այդ հետախուզական աշխատանքների շրջանակներում ընդամենը 2-3 տարվա ընթացքում իրականացվել է երկրաբանահետախուզական կոմպլեքս ուսումնասիրություններ ուրան-թորիումի քանակական գնահատմամբ և երևակման հեռանկարով:




Իրականացված հետախուզական աշխատանքների տվյալները 1955թ.-ի հաշվետվության վրա հիմնված ցույց են տալիս մինչև 500 և ավել գամմա (խրամահոր 3 (շտոլնյա)) ակտիվություն (նկ.3):


Գոլդերի և Գեոթիմի էքսպերտներին և աշխատակիցներին անհարժեշտ էր ուսումնասիրել և հաշվի առնել 1955թ.-ի կատարված աշխատանքների արդյունքները և կատարել վերլուծություն:

Լիդիան ընկերությանը անհրաժեշտ է կատարել գնահատում իրենց պլանավորված դատարկ ապարների լցակույտի տարածքի փոխհարաբերությունը 1955թ.-ին կատարված հետախուզական աշխատանքների արդյունքների հետ՝ հաշվի առնելով կանխատեսվող հիդրոերկրաբանական ռեժիմների փոփոխությունները լցակույտի աշխատանքները իրականացնելուց հետո: Քանի որ պետք է հաշվի առնել ուրան-թորիումի հանքայնացման և լցակույտի փոխհարաբերությունը:

Վերոնշյալ դրույթներից կարելի է եզրակացնել, որ Լիդիան ընկերությունը պետք է իրականացնի Ամուլսարի ոսկեբեր կվարցիտների նոր ՇՄԱԳ:



Նկ.1 Լիդիանի կողմից իրականացված GRE-B8, GRE-B6, GRE-B10, GRE-W1, GRE-B6A հորատանցքերի տեղադիրքը:



Նկ.2 1955թ.-ի ուրան-թորիումի երևակման և Լիդիանի կողմից կատարված աշխատանքների համադրում:



Նկ.3 1955թ.-ի իրականացված աշխատանքերի իրամասերի ուրան-թորիումի հանքայնացման տեղադիրք:

Հարգելի տիկին Աղալարյան, Ձեզ տեղեկացնեմ նաև, որ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Գեղամ Մուրադյանի եզրակացությունը ստանալու համար ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարը դիմել է ՀՀ բնապահպանության նախարարին, քանի որ երկու օր տևած ստուգայցի արդյունքում կազմված փաստաթուղթը դեռևս ստորագրված չէ, հետևապես այդ փաստաթղթում տեղ գտած տվյալները չեն ներառվել ստուգման ակտում:



Ա. Գրիգորյան